Հավելված
ՀՀ պաշտպանության նախարարի
2018 թվականի 12 դեկտեմբերի
№ 16 - Ա հրամանի

Կ Ա Ր Գ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Զինվորական գրքույկը փաստաթուղթ է, որն արտացոլում է քաղաքացու զինապարտության կարգավիճակը և պարտադիր զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների համար համարվում է անձը հաստատող փաստաթուղթ:

2. Զինվորական գրքույկը քաղաքացուն տրվում է զինվորական կոմիսարիատի կողմից՝

1) քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս,

2) պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացուն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պահեստազորում հաշվառելիս:

3. Զինվորական գրքույկը քաղաքացուն տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1269-Ն որոշմամբ հաստատված զինվորական հաշվառման կարգի պահանջների համաձայն:

4. Զինվորական գրքույկում գրառումները կատարվում են կապույտ թանաքով գրիչով, ընթեռնելի ձեռագրով, արգելվում են ջնջումները կամ ուղղումները:

5. Զինվորական գրքույկի տիտղոսաթերթի դարձերեսը.

1) լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

2) քաղաքացու ազգանունը, անունը հայրանունը, ծննդյան օրը, ամիսը և տարին լրացվում են քաղաքացու ծննդյան վկայականի տվյալների հիման վրա,

3) քաղաքացու ծննդյան ամիսը և զինվորական գրքույկի տրման ամիսը գրառվում են տառերով,

4) քաղաքացու ստորագրությունը կատարվում է անձամբ,

5) զինվորական կոմիսարի փոխարեն կարող է ստորագրել միայն սահմանված կարգով նրան փոխարինող պաշտոնատար անձը,

6) քաղաքացու լուսանկարը 3x4 չափի է, զինվորական կոմիսարիատի զինանշանով կնիքը դրվում է լուսանկարի աջ անկյունում, պարզ և ընթեռնելի, առանց դեմքը փակելու:

6. Զինվորական գրքույկի «Ι. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» գլուխը.

1) լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

2) ծննդավայրը և ազգությունը լրացվում են քաղաքացու ծննդյան վկայականի տվյալների հիման վրա,

3) կրթությունը և մասնագիտությունը (դրա առկայության դեպքում) լրացվում են համապատասխան ավարտական վկայականների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա,

4) ընտանեկան դրությունը լրացվում է «Ամուսնացած» կամ «Ամուրի» բառերով, ամուսնացած լինելու դեպքում՝ ամուսնության վկայականի հիման վրա:

7. Զինվորական գրքույկի «ΙΙ. ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ» գլխի.

1) 6-րդ և 7-րդ կետերը լրացվում են զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

2) 6-րդ կետում նշվում է քաղաքացու բժշկական փորձաքննությունն իրականացրած բժշկական հանձնաժողովի անվանումը, զինծառայության համար պիտանիության աստիճանը նշվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N404-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի, ծառայության վայր մեկնելու ժամկետը նշվում է օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը, ամիսը և տարին,

3) 7-րդ կետում նշվում են պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու և պահեստազորում հաշվառվելու հիմքերը,

4) 8-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, նշվում է անձնակազմի ցուցակներից հանելու հրամանի համարը, օրը, ամիսը և տարին, զինվորական հաշվառման համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը նշվում է ոչ ուշ, քան պահեստազոր արձակելու հրամանի տրման օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը:

5) 9-րդ և 10-րդ կետերը լրացվում են զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

6) 11-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, զորահավաքային զորակոչի շրջանակներում քաղաքացուն զինվորական ծառայության զորակոչելիս,

7) 12-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, իսկ զորամասում լրացված չլինելու և քաղաքացու՝ զինվորական ծառայության մեջ չլինելու դեպքում՝ զինվորական կոմիսարիատում՝ զորամասի կողմից տրված տեղեկանքի հիման վրա, որում պետք է նշված լինեն մարտի օրը, ամիսը, տարին, ստորաբաժանումը, պաշտոնը, որտեղ մասնակցել է մարտերի՝ ներկայացվում է որպես զորամասի պայմանական համարը (քանի որ զորամասի համարը արդեն իսկ բացահայտում է դրա տեղակայումը), (օրինակ՝ 02-06.04.2016թ. մասնակցել է մարտերի N XXXXX զ/մ, ստորաբաժանում, որպես՝ հրաձիգ) առկայության դեպքում՝ մարտին ներգրավվածության մասին զորամասի հրամանատարի հրամանի համարը, օրը, ամիսը, տարին: Կետը լրացվում է զինվորական ծառայության ընթացքում կամ կամավոր հիմունքներով ինքնապաշտպանության ուժերի կազմում տեղի ունեցած մարտին անմիջականորեն մասնակցած լինելու դեպքում:

Սույն ենթակետի իմաստով մարտը՝ զորքերի մարտավարական գործողությունների հիմնական ձևն է՝ միավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների՝ ըստ նպատակի, տեղի ու ժամանակի կազմակերպված և համաձայնեցված հարվածներով, կրակով և զորաշարժով հակառակորդին ոչնչացնելու (ջախջախելու), նրա հարվածները ետ մղելու և սահմանափակ շրջանում կարճ ժամանակահատվածում այլ մարտավարական խնդիրներ կատարելու նպատակով,

8) 13-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

9) 14-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, իսկ օրենքով սահմանված պահեստազորային պատրաստության միջոցառումների մասնակցության արդյունքներով շնորհված զինվորական կոչումները և մասնագիտական կարգերը՝ զինվորական կոմիսարիատում,

10) 15-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, իսկ պահեստազորում հաշվառված քաղաքացու դեպքում՝ զինվորական կոմիսարիատում,

11) 16-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների, իսկ զորամասում լրացված չլինելու և քաղաքացու՝ զինվորական ծառայության մեջ չլինելու դեպքում՝ զինվորական կոմիսարիատում՝ զորամասի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

8. Զինվորական գրքույկի «III. ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ» գլուխը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների (ներառյալ օրենքով սահմանված պահեստազորային պատրաստության միջոցառումների մասնակցության ժամանակ):

9. Զինվորական գրքույկի «IV. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ» գլխի.

1) 17-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ և 22-րդ կետերը լրացվում են զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

2) 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերը լրացվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ ըստ պահեստազորում քաղաքացու հաշվառման տվյալների,

3) 20-րդ և 21-րդ կետերը լրացվում են զինվորական հաշվառական մասնագիտությունները և պաշտոնների կոդերը սահմանող ՀՀ կառավարության որոշման և ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանների, ինչպես նաև զինվորական գրքույկի 10-րդ կետում նախատեսված եզրակացության համաձայն,

4) 22-րդ կետը լրացվում է զորամասում՝ ըստ պահանջվող վավերապայմանների: Լրացնում են բոլոր այն զորամասերը, որոնցում պահեստազորային քաղաքացին մասնակցել է օրենքով սահմանված պահեստազորային պատրաստության միջոցառումներին:

10. Զինվորական գրքույկի «V. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» գլուխ.

1) լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների,

2) նշվում է քաղաքացու բժշկական վերափորձաքննությունն իրականացրած բժշկական հանձնաժողովի անվանումը, զինծառայության համար պիտանիության աստիճանը նշվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N404-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի:

11. Զինվորական գրքույկի «VI. ՆՇՈՒՄՆԵՐ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԿԱՐԳԱԳՐԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» գլուխ.

1) լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից,

2) առաջին սյունակում նշվում է այն զորամասի պայմանական համարը, որին կցագրված է պահեստազորային քաղաքացին և կարգագրի տրման օրը, տարին, ամիսը,

3) երկրորդ սյունակը լրացվում է պահեստազորային քաղաքացու կցագրումը դադարեցնելու կամ այլ զորամասում կցագրելու դեպքում, նշվում է կարգագիրը վերցնելու օրը, տարին, ամիսը,

4) 26-րդ կետը լրացվում է՝ ըստ պահանջվող վավերապայմանների, քաղաքացու կցագրման, զորակոչի և պահեստազորային հաշվառման շրջանակներում՝ զինվորական կոմիսարիատի կողմից, պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի

դեպքում՝ զորակոչից հետո մեկ տարի անց և զինվորական ծառայությունից արձակվելիս՝ զորամասում:

12. Զինվորական գրքույկի «VII. ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ» գլուխ.

1) լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից կամ զորամասում,

2) նշվում է մարտական հերթապահության մեջ ներգրավված (մասնակցած) լինելու հանգամանքը,

3) գրառվում են զինվորական գրքույկում չնախատեսված (օրինակ՝ արյան խումբը, պետական և ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվությունը և այլն) կամ զինվորական գրքույկում առկա տվյալների՝ ըստ անհրաժեշտության կատարվող փոփոխությունների վերաբերյալ նշումներ,

4) նշումները հաստատվում են զինվորական կոմիսարի (զորամասի հրամանատարի) ստորագրությամբ և զինվորական կոմիսարիատի (զորամասի) զինանշանով կնիքով:

13. Զինվորական գրքույկի «VIII. ՆՇՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» գլուխը լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից՝ ըստ պահանջվող վավերապայմանների: